Էրկու անգամ էտենց կանչից։ Էրկու անգամ որ էսենց կանչից, ձէն էլաւ գերըզմնէն, էսաց.—Կինա՛ մատ քիւ խէր. բան չ'ունիմ։

Էլաւ, կինաց վեար Դաւթի գերըզմնին. կինաց Դաւթը գերըզմնի վերայ տը կանչէր, չ'կանչից, դարձաւ յիտ (կնիկ միտ ինկաւ). դարձաւ, էկաւ ղձին խեծաւ, քշից, կինաց Հադրբեջան։ Կինաց, տեսաւ գեորզ ինչխ տրիր էր, էն տարզ մնացիր էր. մարդ չէր կեացի էնդեղ, քեաղաքն էլ աւիր ին, մարդ չկայ։

Կինաց, ուր տուն մտաւ, տեսաւ՝ կնիկ ուր թախտին[1]) մեռիր ի։

Ձեռ էտու կնկան ձեռ, տեսաւ գիրուկ թուղթ ըմ կայ մէջ, էսաց. «Քենէ կ'խնդրիմ, ինչ ժամանակ տիւ կեաս ըզը տեսնաս, ընձը տանիս Սասում, Խանդիւթ խաթընը կուշտ թաղիս. էս կռապաշտ խողը մէջ չթորկիս»։

Էլաւ, էբարձ ղմարմին, առից, տարաւ Սասմայ տուն. գրեզման շինից, Խանդիւթ խաթընը կուշտ թաղից։ Էլաւ, քեառսուն պատարագ էտու ինիլ, Սասմայ տուն քեանի մ' որ մեռած կէն, բիրադին պատարագ էրաւ։

Սասմայ տնէն էլաւ, խեծաւ ուր ձին, էկաւ, Վանայ քեաղաք խասաւ։—Վանայ քեար մկայ էրկու թարանջայ[2]) կայ, կ'ասին Քիւռիկ-Ջալալու ոտաց տեղն ի.—Էնդեղ Վանայ քեարի տէր էկաւ յէոջիւ, էսաց.—Էստեղ քիւ տեղ չի, ըստիւցայ դարձի, կինա՛։

Դարձաւ, կինաց վեար խօր գերըզմնին, կանչից.

«Խէրիկ, վի՛ր իլի, խէր, վի՛ր իլի,
ա՛խ հալա տգեոյ վի՛ր իլի*).
Սասման տնէն բէբար[3]) իմ իլի**),
ա՛խ հալա բէբար իմ իլի.

---

[1]) Գահ, մահճակալ։ [2]) Սանդուղ։ [3]) Անբաժին։

*) Երգ է։

**) Այս տողից երևում է, որ Մհեր զրկուած էր իւր հայրենի ժառանգութիւնից, թէև սոյն վարիանտում տեղեկութիւն չկայ այդ մասին. բայց Ա. վարիանտում այսպէս է բացատրուած այդ